ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

21.02.2019թ կնքված Անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

ՀՀ, ք. Գյումրի Երկու հազար քսան մեկ թվականի -ի

ՀՀ քաղաքացիներ՝ Արտաշես Ռուբենի Սարգսյանս, (անձնագիր՝ AM 0417045, տրված 016-ի կողմից 11.08.2011թ. Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Տերյան 133 տուն), Հայկուհի Անդրանիկի Մարգարյանս (անձնագիր՝ AM 0688129, տրված 016-ի կողմից 18.04.2012թ. Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Տերյան 133 տուն), այսուհետ՝ Վարձատու մի կողմից, և

ՀՀ կադաստրի կոմիտեն, իրավաբանական հասցեն ք. Երևան Արշակունյաց 7, ի դեմս գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Հմայակի Եգանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ Կարեն Բենյամինի Խաչատրյանը (նույնականացման քարտ 012183901 տրված 11.08.2020թ., 016-ի կողմից, հաշվառված ՀՀ ք. Գյումրի, Կամոյի փողոց, 42[ա] շենք, 34 բնակարան) այսուհետ՝ Վարձակալ, (Գրանցման համարը 01Բ001184, ՀՎՀՀ 02534328, Հասցե՝ ՀՀ., ք. Երևան, Արշակունյաց 7), այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով միմյանց միջև 21.02.2019թ.-ին կնքված Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 6.1 կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի 6.1 կետում կատարում են հետևյալ փոփոխությունը և լրացումը.

   6.1 Գույքի վարձակալության ժամկետը սահմանվում (երկարաձգվում) է մինչև 2021թ հուլիսի 1-ը Վարձատուն երաշխավորում է, որ Պայմանագրի 1.1. կետում նշված Գույքը գրավի առարկա չի հանդիսանում, վաճառված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:
2. Կողմերի կողմից Համաձայնագրի կնքումը չի ենթադրում Պայմանագրի շրջանակներում սահմանված պատասխանատվության չափի և (կամ) ծավալների փոփոխություն և (կամ) նվազում:
3. Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմից տրվում է մեկական օրինակ:
4. Համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն համաձայնագրի ժամկետի ավարտից հետո՝ դրանից ծագող իրավունքի դադարումը ենթակա է պետական գրանցման Կողմերից մեկի դիմումի հիման վրա:

ՎԱՐՁԱՏՈՒ՝

Արտաշես Ռուբենի Սարգսյան
Հասցեն՝ ք. Գյումրի, Տերյան 133 տուն
Հաշվարկային հաշիվ՝ 11500605127651
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

ՎԱՐՁԱԿԱԼ՝

ՀՀ կադաստրի կոմիտե
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 7
Հ/Հ 900011030815
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Լիազորված անձ՝ Կարեն Բենյամինի Խաչատրյան

ՎԱՐՁԱՏՈՒ՝

Հայկուհի Ռուբենի Սարգսյան
Հասցեն՝ ք. Գյումրի, Տերյան 133 տուն
Հաշվարկային հաշիվ՝ 11500605127651
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Նոտարական ակտի կոդ: 604-20210531-117-5135785
Նոտարական ակտի գաղտնագիր: 0AG77V

Հայաստանի Հանրապետության անունից 31/05/2021 երկու հազար քսանմեկ թվականի մայիսի երեսունմեկ Սույն համաձայնագիրը հաստատված է իմ ՀՀ <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար՝**ՌՈԲԵՐՏ ՏՈԼԻԿԻ ՄՈՒԿՈՒՉՅԱՆԻՍ** կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը , գործունակությունը, ինչպես նաև նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են : Սույն համաձայնագիրը 30 /երեսուն/աշխատանքային օրյա ժամկետուն գրանցման է ենթակա Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԹԻՎ 2218

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ռոբերտ Տոլիկի Մուկուչյան

34